ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԻՐԱՔՈՒՄ ՃԱՊՈՆԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երկրորդ համաշխարհային պատերազմում ծանր պարտություն կրած Ճապոնիային 1946թ. պարտադրվեց «խաղաղ սահմանադրության» ընդունումը, որը մինչ օրս մնացել է անփոփոխ: Նրա 9-րդ հոդվածով սահմանափակվում է "կանոնավոր բանակ պահելու ու պատերազմական գործողություններ իրականացնելու" Ճապոնիայի իրավունքը: Սառը պատերազմի տարիներին վերոհիշյալ հոդվածի վերանայումը ոչ միայն անհնար էր քաղաքական վերնախավի և բնակչության լայն զանգվածների բացասական վերաբերմունքի պատճառով, այլ նաև աննպատակահարմար և անիրատեսական էր աշխարհաքաղաքական առումով: Ճապոնիայի իշխանությունները ու ժողովուրդը կենտրոնացնելով իրենց ողջ ներուժը ստեղծագործ գործունեության վրա կարողացան արձանագրել տնտեսական աճի չտեսնված տեմպեր ու ապահովել անախադեպ տեխնոլոգիական առաջընթաց: Արդյունքում Ճապոնիան դարձավ արդյունաբերական հսկա՝ իր արժանի տեղը գրավելով աշխարհի ամենազարգացած երկրների շարքում: Այդուհանդերձ, Ճապոնիան տնտեսապես հզոր տերություններից մեկը լինելով տասնամյակներ ի վեր չնչին դերակատարություն ուներ միջազգային կարևորագույն հիմնախնդիրների կարգավորման գործում: Փաստորեն Ճապոնիայի տնտեսական զարգացման մակարդակը չէր համապատասխանում միջազգային անվտանգության համակարգում նրա ունեցած դերին: ԽՍՀՄ փլուզումից հետո և միջազգային նոր աշխարհակարգի ձևավորման պայմաններում Ճապոնիայի իշխանությունների առջև կանգնեց այդ անհամապատասխանության աստիճանաբար վերացման հարցը:

Ասիական մայրցամաքում ստեղծված նոր աշխարհաքաղաքական իրականության (ԱՄՆ-ի և Չինաստանի միջև աստիճանաբար ծավալվող պայքարը), Ճապոնիայի վատթարացող տնտեսական իրավիճակն ու քաղաքական ասպարեզում նոր սերնդի ի հայտ գալը նույնպես նպաստեցին երկրի արտաքին քաղաքական ռազմավարության ակտիվացմանը:

1997թ. սկսած Ճապոնիայի ռազմական հայեցակարգում հայտնվեցին նոր միտումներ: Այսպես, նույն թվականին Ճապոնիայի պաշտպանության նախարարության կողմից հրապարակված «Սպիտակ թղթում» ամրագրվեցին Ճապոնիայի Ինքնապաշտպանական Ուժերը (ՃԻՈՒ) տարածաշրջանային ռազմական ուժի վերածելու մտադրությունները: Արդյունքում, 1999թ. Ճապոնիան II աշխարհամարտից հետո առաջին անգամ մասնակցեց ԱՄՆ կողմից Գուամում իրականացված զորավարժություններին՝ տեղակայելով այնտեղ իր ռազմական օդանավերից մեկը: Նույն 1999թ. ՃԻՈՒ-ն օդային ուժերի հնարավորությունները բարելավելու նպատակով ձեռք բերեց չորս "Boeing 767" վերահսկողական օդանավ: 2000թ. Տոկիոն պայմանագիր ստորագրեց Սինգապուրի հետ վերջինիս ռազմական բազաներից հնարավոր ճգնաժամի ժամանակ օգտագործելու վերաբերյալ: Ռազմական քաղաքականության ակտիվացումը շարունակվեց նաև 2001թ.: Տոկիոն պատրաստվում է գնել "Boeing 767" տիպի օդանավեր թռիչքի ընթացքում օդանավերի լցքավորումն իրականացնելու նպատակով օգտագործելու համար: Դա հնարավորություն կտա մեծացնել ռազմակայաններում տեղակայված F-15 օդանավերի գործողությունների տարածքը մինչև 3000 մղոնի: Վերջին "Aegis" տիպի կործանիչների ձեռքբերումը շեշտակիորեն բարելավեց Ճապոնիայի ծովային հետախուզության հնարավորությունները: ԱՄՆ ռազմական զեկույցների համաձայն, Ճապոնիայի զինված ուժերը ի վիճակի են բարձր մակարդակով վարկածակցության ԱՄՆ-ի տեխնոլոգիապես առաջատար ուժերի հետ[1]: Պետք է արձանագրել, որ արդեն իսկ 2001թվականին՝ երբ իշխանության եկավ Ջունիչիրո Կոիզումիի գլխավորած կառավարությունը, սպա երկիրը ուներ աշխարհի ամենազարգացած ռազմաարդյունաբերական համալիրներից մեկը[2]: 2001թ. սեպտեմբերի 11-ին Նյու-Յորքում տեղի ունեցած դեպքերն ու այնուհետև ԱՄՆ-ի գլխավորությամբ միջազգային ահաբեկչության դեմ ծավալված պայքարը ստեղծեցին պաշտոնական Տոկիոյի համար այն բարենպաստ միջազգային մթնոլորտը, երբ Ճապոնիան մի կողմից չէր կարող իր գործնական օժանդակությունը չցուցաբերեր իր ռազմավարական դաշնակցին՝ ԱՄՆ-ին, իսկ մյուս կողմից էր փորձեց առիթը օգտագործել նաև միջազգային անվտանգության համակարգում իր դիրքերն ամրապնդելու համար: Նամանավանդ, որ այդ նույն պատճառաբանությամբ, չնայած իր «խաղաղ սահմանադրությանը», Ճապոնիան տարիների ընթացքում արդեն իսկ Ինքնապաշտպանական Ուժերը հստեստ անվանման տակ ստեղծել էր հզոր և ժամանակակից բանակ: ՃԻՈՒ-ի վրա ծախսվում է երկրի բյուջեի շուրջ 6.1 տոկոսը (շուրջ 50 միլիարդ դոլար), որը կազմում է Ճապոնիայի ՀՆԱ-ի 0.995%-ը[3]: ՃԻՈՒ-ն իր տրամադրության տակ ունի խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում ամենամեծ նավատորմը ԱՄՆ-ից հետո, իսկ նրա ցամաքային ուժերը գերազանցում են Բրիտանական թագավորական բանակն ու նավատորմը իրար հետ գումարած: Վերոհիշյալ տրամաբանությամբ ղեկավարվելով, 2001թ.

ընտրություններից անմիջապես հետո խորհրդարանում իր առաջին իսկ ելույթում, Ճապոնիայի վարչապետ Ջունիչիրո Կոիզումին նշեց, որ «քաղաքական ղեկավարության պարտականությունն է՝ ճշտել թե ինչպիսի հասարակություն պետք է ստեղծվի. եթե ժողովուրդն ու պետությունը հայտնվեն ճգնաժամային վիճակում»: Ջ. Կոիզումին ստահեցրեց, որ ինքը կներկայացնի «արտակարգ օրենսդրություն» (emergency legislation) փոփոխվող անվտանգության կարիքների հոգալու համար[4]:

Հարկ է նշել, որ Ճապոնիայի բնակչության վերաբերմունքը սահմանադրության նշված հոդվածի նկատմամբ շարունակում է մնալ բաժանված: Երկրի 50%-ը դեմ է արտահայտվում սահմանադրության այդ հոդվածի վերանայմանը, իսկ մյուս կեսը՝ կողմ: Վերջին սոցիոլոգիական հարցումների համաձայն, երիտասարդության և միջին տարիքի ճապոնացիների մեծամասնությունը պատրաստ է, որպեսզի իրենց երկիրը ավելի մեծ դերակատարություն ունենա Ասիայի անվտանգության համակարգում[5]: Եթե ճապոնական հասարակությունը բաժանված է այդ հարցի վերաբերյալ, ապա թե կառավարող լիբերալ- դեմոկրատական կուսակցությունը՝ ի դեմս երկրի վարչապետ Ջ.Կոիզումիի, և թե երկրի գլխավոր ընդդիմադիր ուժը՝ դեմոկրատական կուսակցությունը. միակարծիք են սահմանադրական փոփոխությունները իրականացնելու անհրաժեշտության հարցում: Ճապոնիայի վարչապետը վերջերս կառավարության մամլոյի ակումբում տված հարցազրույցի ընթացքում նշել է. «Սահմանադրական բարեփոխումները այս պահին չեն Ճապոնիայի համար: Լիբերալ-դեմոկրատական և դեմոկրատական կուսակցությունների խորհրդարանական քննարկումները պետք է ավարտվեն այդ նպատակին ուղղված օրենքների ընդունմամբ: Մեր կառավարության դիրքորոշումն այդ հարցում կայանում է սահմանադրական մեկնաբանությունները անփոփոխ թողնելու մեջ: Քննարկումները կենսունակ են սահմանադրական վերանայումները իրականացնելու մեջ»[6]: Սակայն այս հարցը խորհրդարանական երկարատև քննարկումներ պահանջող բարդ գործընթաց է: Փոփոխությունների նախագիծը վարչապետի խոսքերով լիբերալ- դեմոկրատական կուսակցությունը պատրաստ է ավարտել մինչև 2005թ. վերջը, իսկ դեմոկրատական կուսակցության ղեկավար Նաոտո Կանի խոսքերով իր կուսակցությունն այդ գործընթացը կավարտի մինչև 2006թ. վերջը: Տարածաշրջանի այլ պետություններ, ի հակազդեցություն Չինաստանի աստիճանաբար ծավալվող ազդեցությանը, նույնպես շահագրգռված են Ճապոնիայի զինված ուժերի ակտիվացման հարցում: Այսպես, Ավստրալիան և Սինգապուրը բազմիցս կոչեր են արել Տոկիոյին մեծացնել իր դերակատարությունը տարածաշրջանային անվտանգության համակարգում: Սակայն ամենահիմնական ուժը, որը մղում է Ճապոնիային նոր դեր ստանձնելու ուղղությամբ դա Վաշինգտոնն է: Մեծացնելով Տոկիոյի կշիռը Չինաստանի ծավալումը զսպելու գործում, հատկապես 2001թ. սեպտեմբերի 11-ից հե-

սու, Ճապոնիայի աջակցությունը ԱՄՆ-ին՝ վերջինիս կողմից ծավալված հակաահաբեկչական համընդհանուր պայքարում, ձեռք է բերում ծայրահեղ կենսական նշանակություն: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առաջին անգամ 2001թ. նոյեմբերին Ճապոնիան մասնակցեց իր սահմաններից դուրս իրականացվող ռազմական գործողություններին, գործուն աջակցություն ցուցաբերելով Գուամում և Սան-Դիեգոյում տեղակայված ԱՄՆ-ի նավատորմին:

Եթե Աֆղանստանում Ճապոնիան մասնակցեց վերակառուցման տնտեսական ծրագրերի ֆինանսավորման տեսքով, ապա Ճապոնիայի կողմից Իրաքում անմիջական զինվորական ներկայությունը ավետեց սրակապես նոր դարաշրջանի սկիզբ պաշտոնական Տոկիոյի համար:

Այսպես, 2003թ. հուլիսին Ճապոնիայի խորհրդարանում վարչապետ Ջ. Կոիզումիի կողմից ներկայացված հակաահաբեկչական օրենքի նախագծի ընդունմամբ՝ Իրաքում վերակառուցողական աշխատանքների իրականացմանն աջակցություն ցուցաբերելու նպատակով, կառավարությանը իրավունք տրվեց 1000–ին հասնող «ինքնապաշտպանական» ուժեր ուղարկել Իրաք: 2004թ. փետրվարին հումանիտար և խաղաղապահ գործողությունների իրականացման նպատակներով Իրաք մեկնեց ճապոնական ցամաքային փորձագիտա-հետազոտական զինվորական խումբը: Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո Ճապոնիայի զինված ուժերն առաջին անգամ իրենց սահմաններից դուրս ձեռնարկեցին նման ընդարձակ ու վտանգավոր[7] առաքելություն: Ուժերի մեկնումից առաջ, 2004թ. փետրվարի 1-ին, Հոկայդոյի Ասահիկավա քաղաքում կազմակերպվեց պաշտոնական արարողություն՝ վարչապետ Ջ. Կոիզումիի և Ճապոնիայի Պաշտպանության Գործակալության ղեկավար Շիգերու Իշիբայի մասնակցությամբ: Վարչապետի, ինչպես նաև Պաշտպանության Գործակալության ղեկավարի ելույթներն ուղղված զինվորներին և նրանց հարազատներին, հաստատում էին նախապես հնչած իշխանության դիրքորոշումներն այդ հարցում, այն է՝ Իրաքում «միմիայն հումանիտար և խաղաղապահ գործողությունների իրականացում»[8]: Երկրի վարչապետի խոսքերով, այս առաքելությունն այնքանով է կարևոր Ճապոնիայի համար, որ այն կպաշտպանի երկրի պարտավորությունները միջազգային հանրության առջև: «Ճապոնիայի կառավարության ինքնապաշտպանական ուժերը կարող են գրանցվել ՄԱԿ-ի կողմից խաղաղապահ գործողություններ իրականացնող մասնակիցների թվում: Միևնույն ժամանակ այն կամրապնդի չորս տասնամյակ գոյություն ունեցող ԱՄՆ- Ճապոնիա դաշինքը».- նշեց Ջ. Կոիզումին[9]: Իրաքում ճապոնացի զինվորների ներկայությունը վկայում է միջազգային անվտանգության համակարգում Ճապոնիայի դերի ակնհայտ ակտիվացման մասին: Հատկապես հաշվի առնելով Տոկիոյի հավակնությունները ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդում մշտական անդամ դառնալու

ությամբ: Կարծում ենք այսուհետ ևս մենք ականատես կլինենք Ճապոնիայի ռազմաքաղաքական դերի ակտիվացմանը թե՝ ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում և թե՝ միջազգային հանգուցային հիմնախնդիրների կարգավորման գործընթացներում:

Հաշվի առնելով վերոհիշյալը, ինչպես նաև Ճապոնիայի արտաքին քաղաքականության հայեցակարգի հնարավոր փոփոխությունները՝ անհրաժեշտություն է նկատվում նոյտվի մոտեցում դրդեգրել նաև հայ-ճապոնական հարաբերությունների ողջ համակարգի նկատմամբ:

ROUBEN KARAPETIAN

JAPANESE MILITARY PRESENCE IN IRAQ

The article provides short background on Japanese Self Defence Forces and what lies behind the decision of the Japanese government for sending its small military contingent to Iraq in February 2004. By sending the troops to Iraq Tokyo is trying to rejoin the ranks of the great powers and play a full-fledged security role not only in the region but on the wider world stage. Taking into consideration the substantial changes in the Japanese foreign political agenda, a new approach to the whole system of Armenian-Japanese bilateral relations is required.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. http://www.stratfor.com. Will Japan Rearm. February 2001.
2. Ճապոնիայի բանակի թվաքանակը կազմում է 236.600 զինվոր (46.000 պահուստային): *Յամաքային ինքնապաշտպանական ուժերը* կազմված են 13 դիվիզիայից, 950 զրահատեխնիկայից, 463 ուղղաթիռից, 800 միավոր հրետանային տեխնիկայից: *Ծովային ուժերը* բաղկացած են՝ 16 սուզանավից; 58 վերջրյա նավերից, 35 ականազերծող նավերից, 110 օդանավերից, 99 ուղղաթիռից: *Օդային ուժերը՝* 368 կործանիչ, 42 տրանսպորտային և 182 այլ օդանավերից:
3. Japan Almanac 2003, Defence Spending, p.47, Asahi Shimbun, Tokyo.
4. Cato Institute, "Japan takes a Modest Step Toward Global Security", by Ted Galen Carpenter, January 8, 2002
5. "Japan Times", 22.11.2003
6. "Japan Echo", Vol.32, N2. April 2004
7. Իրաքցիների կողմից 3 ճապոնացիների պատանդ վերցնելը լուրջ փորձություն եղավ Կոիզումիի կառավարության համար: Սակայն արաբական որոշ երկրների միջնորդությամբ (հիմնականում Սիրիայի) շնորհիվ հնարավոր եղավ պատանդների ազատ արձակումը: www.imra.org.il Syrian FM blames US for kidnappings in Iraq. 10.04.2004
8. "Asahi Shimbun", February 2, 2004
9. "Yomiuri Shimbun", February 1, 2004